

ԱՐՀԱՒԻՐՔ Բառը
կամ՝ Հարամանին այնքան էլ սարսափելի չէ, որքան թուում է

Դասական հայերէնում «արհաւիրք»-ը անեզական բառ է, սեռ.՝ «արհաւրաց»։ «Աւեր» բառի հետ կապ չունի, որքան էլ առաջին հայեացքից որոնող միտքը փորձում է այդ արմատը տեսնել այնտեղ, եւ որքան էլ մերաւրեայ լեզուամտածողութեան մէջ բառն աւաւելապէս ունի աւերածութեան իմաստ։ Աւելորդ չէ վերստին յիշեցնել, որ «աւեր» բառը երբեք չի ենթարկուում հնչիւնափոխութեան. «աւիրել» ձեւ չկայ, բայն է «աւերել»։

Ստուգաբանական փորձեր։ Հայկազեան բառգիրքը փորձում է ստուգաբանել. «Արհաւիր, որպէս ահ աւիր, այսինքն՝ վայրապար (իզուր, դատարկ, սին - ծան. Լ. Աւ.), ավարէ (պարսկական բառ, իբր որից է երկրորդ բաղադրիչ «աւիր»-ը, տե՛ս նաեւ Աճառեանի Արմատական բառարանը¹ - Լ. Աւ.). «կամ ահաւոր իրք. երկեւղ մեծ սաստկացեալ յերեւակայութենէ, սոսկումն, զարհուրանք, երկիւղալի իրք եւ ցնորք, խրտուիլ եւ տեսիլ ուրուական»²։

Ահա մատենագրութիւնից Հայկազեան բառգրքի (ՆԲՀ) մատուցած ւարինակներից մի քանիսը.

* Եւ է *արհաւիրք* ի ձեռն յոռին ունակութեան ումեմն հոգւոյ։ Ի մանկութենէ (պա՛րտ է) յաղթել զայնոսիկ, որ հասանին ի վերայ մեր, *արհաւիրս* եւ երկեւղս։ - Պղատոն, Աւրին., Զ

* *Արհաւիրք* սպառնալեաց։ - Ագաթանգեղոս

* *Արհաւիրք* մեծ անկանէին ի վերայ ամենեցուն։ - Եղիշէ

* *Արհաւրաւք* զարհուրեալ զարթնում։ - Նարեկացի, ՀԱ

* *Արհաւրաւք* մահու պակուցեալս։ - Նարեկացի, ԻԱ

* *Յարհաւրաց* գիշերայնոց։ - Նարեկացի, ՀԷ

* Զերծեալ ի գիշերային *արհաւրանաց*։ - Լամբրոնացի

¹ Աճառեան Հր., *Հայերէն արմատական բառարան*, հ. Ա, Երեւան, 1926, էջ 323։

² ՆԲՀ, Վենետիկ, 1836, հ. Ա, էջ 364։

Աճառեանի կարծիքով՝ «արհաւիրք»ը արի «ահ» արմատի կրկնութեամբ կազմուած բառ է³, այդպէս է ստուգաբանում նաեւ Հիւբշմանը: Հիւնքէարպէնտեանը ենթադրում է, թէ բառի հիմքում Արիմն⁴ է:

Ջահուկեանը համարում է փոխառութիւն իրանական աղբերից՝ ենթադրելի *ahr(a)bir բառից, որի կողքին այնուամենայնիւ դրել է հարցական նշան, եւ առաջարկում է համեմատել ahr > հայերէն ա(ր)հ արմատի եւ խոտանասակերէն birrai «վախենում եմ» բառի հետ⁵: Ուղղորդում է նաեւ դէպի «ահ» եւ «զարհոյր» բառերը: «Ջարհոյր»-ը համարում է կազմուած զ նախածանցով՝ իրանական ենթադրելի *arhor փոխառեալ ձեւից: Իրաւամբ, պարսկերէնից փոխառեալ բառերում ակնյայտ է hr > rh դրափոխութիւնը, ինչպէս պահլաւերէն afrinam-ը (a նախամասնիկ, fri - սիրել, յարգել, գովաբանել), որ հայերէնում տուել է նախ՝ աւհրնել (Էջմիածնի հնագոյն աւետարանում), ապա՝ շրջմամբ՝ աւրհնել: Այդ բառերից է նաեւ աշխարհ-ը՝ հայրս. xšaθra, սանսկ. kšatra, պիլ. xšatr (երկիր) > պրս. šahr (քաղաք):

«Արհաւիրք» հասկացութեան համար Արիմնի «հեղինակութեան» հիմնաւորումներ: Կարծում եմ, որ առայժմ անստոյգ ԱՐՀԱԻԻԲ (*արհաւիրք) բառն իսկապէս կազմուած է զրադաշտական կրանի՝ մթին ուժերն ու չարիքը մարմնաւորող Արիմնի անունից, որ հայերէնում առաւել տարածուած էր խարամանի, խարաման, հարամանի, հարաման⁶ ձեւերով: «Չար աստուածն

³ Հանդէս ամսաւրեայ, Վիեննա, 1899, էջ 233:

⁴ Արիմն - պահլաւերէն Ահրիման կամ Ահրի-Մայնու անուան հայերէն տարբերակը, գրաբարում նաեւ գործածուել են Ահրամ, Խարաման կամ Հարաման ձեւերը. զրադաշտականութեան մէջ՝ չարի մարմնացումն է, «դեւերի դելը», որն ստեղծել է բոլոր չարիքները՝ մահը, հիւանդութիւնները, աղետները, վնասակար գազաններն ու թռչունները եւ մշտական պայքարի մէջ է Ահուրամազդայի՝ բարի աստծու հետ: Ահուրամազդայի իւրաքանչիւր բարի գործին Ահրիմանը պատասխանում է համապատասխան չար գործով:

⁵ **Ջահուկեան Գ.**, *Հայերէն ստուգաբանական բառարան*, Երեւան, 2010, էջ 92:

⁶ Հայերէնն ունի «խորամանկ» բառը, որ հնարաւոր է՝ նոյն խարամանի/հարամանի-ն է: «Մանկ» բառը, որ կա՛մ իրանական փոխառութիւն է, կա՛մ հնդեւրոպականից բնականաւրէն հայերէնին անցած արմատ, նշանակում է նենգութիւն, խորամանկութիւն, ստահակութիւն, դաւ: Բառը հին է, նրանից են կազմուել մանկաւոր, մանկաւորել (մեքենայել, խարդախել, նենգել), անմանկ (անխարդախ, անկեղծ): ՆԲՀ-ն բացատրում է «խորամանկ» բառը՝ որպէս «խորագէտ ի չարիս», չարարուեստ, նենգագործ, դաւադիր, խաբէբայ, պատիր:

համարեալ առ պարսիկս, չար հրեշտակ, դէս, սատանայ, որպէս պատճառ ամենայն չարեաց եւ կարծեցեալ չար իրաց»⁷:

Մատենագրութիւնից բերած ՆԲՀ-ի աւրինակներից մեկը Մատթեոսի աւետարանի՝ Յովհ. Ոսկեբերանի մեկնութիւնից է. «Ոչ գազանաց գազանութիւն, ոչ խարամանեաց արհաւիրք»: Այս արտայայտութիւնը հետաքրքրեց հէնց նրանով, որ ինքնին անշրջանցելի եւ ուշագրաւ գուգորդութիւն է, որովհետեւ թոյլ է տալիս համաբանաւորէն եւ տրամաբանաւորէն եզրակացնել, որ ինչպէս գազանութիւնն է գազանին բնորոշ որակ, այդպէս էլ արհաւիրքն է յատկանշական խարամանիին (Արհմնին), այսինքն՝ Արհմնը սփռում է արհաւիրք, ահ ու երկելոյ, արհաւիրքը բխում է Արհմնից:

«Արհաւիրք»ի երկրորդ մասը, կարծում եմ, ՎԻՐ արմատն է, որն ինչպէս ռահՎԻՐայ, վարսաՎԻՐ, այնպէս էլ իմ ենթադրութեամբ՝ *ԱրմաՎԻՐ, բառերն է բաղադրել, նշանակում է՝ ստեղծել, կառուցել, յարդարել, կերտել եւ հոմանիշն է շատ, շէն, կերտ, պատ արմատների, որոնք քաղաք են նշանակում (Արտաշատ, Հայկաշէն, Տիգրանակերտ, Վաղարշապատ)⁸: Հէնց Հայկազեան բառգրքի բացատրութիւնը հաստատում է այդ իմաստը. մեծ երկելոյ՝

⁷ ՆԲՀ, Վենետիկ, 1836, հ. Ա, էջ 930:

⁸ «Կան բառեր, որոնցում այդքան ակնյայտ եւ դիւրութեամբ տարորոշելի չեն արմատները: Աւրինակ՝ «վարսավիր» բառում յստակ է «վարս» արմատը, մինչդեռ բառի մեւս հատուածը կարող է տարակուսանք առթել՝ «աւիր» թե՛ «վիր»: Հայերէնում կայ «վիրալ» բայը, որ նշանակում է «սափրել, գերծուլ, մազերը կտրել»: Ուստի, «վարսավիր» (նախնական տարբերակը՝ «վարսավիրայ») բառի կազմութիւնը յուշում է նրա ուղղագրութիւնը: Նոյն արմատից է կազմուած նաեւ «ռահվիրայ» բառը, որ նշանակում է «նախակարապետ, առաջամարտիկ, հիմնադիր», եւ որի արմատներն են՝ «ռահ» (պահլաւերէն՝ «ճանապարհ») եւ «վիրայ» (նոյնպէս պահլաւերէն՝ «կտրել»):

Կայ հայերէն հնագոյն տեղանուն, որ հնչում է [արմավիր]: Տեղանունը չէր կարող կապուած լինել «արմաւ» բառի հետ, թե եւ վկայուած է «Արմաւիր» ձեւով եւ այսաւր էլ աւանդաբար գրուում է այդպէս: Խորենացու պատմագրութեան հիման վրայ կազմուած Հայկազունիների արքայատոհմի ժամանակագրութեան համաձայն՝ այն հիմնել են Հայկազունի Արմենակը (Արամանեակ) եւ նրա որդի Արամայիսը, մ. թ. ա. ԻԱ-Ի դարերում Երասխաձորում: Իմ կարծիքով, պատմագրի արձանագրած՝ քաղաք արկանելու վիպական իրադարձութիւնը հիմք է տալիս ենթադրելու, որ հիմնադիրներն իրենց անուամբ են կոչել քաղաքը, քանի որ աւրինաչափաւորէն այդպէս են վարուել եւ վարուում քաղաք հիմնադրողները (Վաղարշապատ, Երուանդաշատ, Տիգրանակերտ, Հայկաշէն եւ այլն): Հիմնադրել, նշանակում է կառուցել, կոփել, կռել, յարդարել, ստեղծել, յարինել, կտրել: Բոլոր այս իմաստները միանգամայն կրում է «վիրայ» արմատը, որ քաղաքի պարագայում հոմանիշ է «շատ» (պահլաւերէն՝ «քաղաք») «շէն», «կերտ» «պատ» արմատներին: Ամենայն հաւանականութեամբ, հէնց «վիրայ» արմատն էլ հիմնադիրների անունների Արմ (Արամ) արմատից կազմել է «Արմավիր» տեղանունը:

Աւետիսեան Լ., *Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը*, Երեւան, 2018, էջ 54:

սաստկացած երեւակայութիւնից, միաժամանակ՝ դատարկ, սին. այսինքն՝ *արհաւիրքը երեւակայութեամբ կերտուած սաստիկ երկելոյ է, երեւակայական տագնապով ստեղծուած սարսափ, Արիմնի նիւթած զարհոյրը: Նոր բառգիրքը որպէս բառի լատիներէն համարժէք ներկայացնում է terror-ը, որ հէնց ահաբեկութիւնն է⁹: Կարելի է ենթադրել, որ ՎԻՐ արմատը ոչ միայն կարող է բաղադրել ի բարաւրութիւն մարդկանց կառուցուած ճանապարհ ու քաղաք նշանակող բառեր, այլեւ ցոյց տալ, թե ինչպէս են նիւթուում եւ ինչ ծագում ունեն սարսափը, ահաբեկութիւնն ու զանգիտանքը (վախ): Խարամանիի-Արիմնի ստեղծած նոյն այդ սին ցնորք-զարհուրանքների մասին Պղատոնը գրում է. «Եւ է (են) արհաւիրք ի ձեռն յոռին ունակութեան ումեմն հոգւոյ: Ի մանկութենէ (պա՛րտ է) յաղթել զայնոսիկ, որ հասանին ի վերայ մեր, արհաւիրս եւ երկելոյ»: Կարծես այդ բառն ինքնին արտայայտում է «սատանան այնքան էլ սարսափելի չէ, որքան թուում է» առածի իմաստը, այսինքն՝ տիրող տագնապը, վախն ու անհանգստութիւնը միայն արհաւիրք են՝ ուռճացած վախ, ցնորք, ոչ աւելին: Արհաւիրքը, լինելով զարհուրանքի հոմանիշը, պարունակում է նաեւ յստակ գիտելիք, որ այդ վախը իրական չէ, այլ՝ չարի ստեղծած պատրանք, որը ենթակայական է, եւ հնարաւոր է յաղթահարել:

Աշխարհաբարում «արհաւիրք» բառը, միայն երկրորդ իմաստով պահպանելով ահն իր նրբերանգներով, մեծապէս կիրառուում է իր ստացած առաջնային նշանակութեամբ՝ որպէս աղետ, փորձանք, դժբախտութիւն, չարիք, պատուհաս:

Յաւդուածի տրամաբանութիւնից հետեւում է նաեւ, որ «արհաւիրք» բառում «վիր» արմատի առկայութեան դէպքում բառի ուղղագրութիւնը վերանայելու կարիք կը լինի:

⁹ Ուշագրաւ է այն փաստը, որ ինչպէս լատիներէն terra բառի համարժէքը ԵՐԿիր-ն է, նոյնպէս եւ լատիներէն terror-ինը համապատասխանաբար ԵՐԿելոյ-ն է: Թե եւ ոչ մի ստուգաբանական բառարան չի փոխարնչակցում այս երկու բառերի ծագումնաբանութիւնը, սակայն համոզուած եմ, որ դրանք սերտաւրէն կապակցուած են: terror բառի նախահնդեւրոպական արմատը *tres է, որ նշանակում է՝ ցնցել, դրանով իսկ ահաբեկութիւնը համեմատուում է երկրի ցնցման հետ: Եւ, ամենայն հաւանականութեամբ, ԵՐԿելոյ բառը, ինչպէս TERRor-ը, ԵՐԿրաշարժին (լատ.՝ TERRaemotus) համարժէք հոգեկան ցնցման նշանն է եւ թերեւս երկրի ցնցումն անուանող եզրի երկիմաստ հոմանիշը, կամ, ի վերջոյ, նախապէս վախի այն տեսակն է, որ երկրի ցնցումը կարող էր ազդել: Գուցէ պատահական չէ, որ «դող» եւ «հող» բառերը ներկայանում են որպէս միեւնոյն բառի տառադարձներ կամ փոխկապացուած հնչիւնախմբեր:

РЕЗЮМЕ

Армянское слово «առհաժիրք» (arhavirk՝ ужас, бедствие) до сих пор неточно. Эта статья - новая попытка этимологии, которая интерпретирует слово как комбинацию двух корней, один из которых - имя воплощения зла в зороастрийской религии - Ариман, о чем предположил и Хюнкеарпеентян, но в чем с ним не соглашается или не уверен Ачарян, а другой – корень «վիր» (vir), что носит в себе значения создать, поправить, установить, основать и в действительности является синонимом корней «шат», «керт», «пат», «шен» (Երվանդաշատ, Թիգրանակերտ, Վաղարշապատ, Այկաշեն). Корень «վիր» (vir) находится и в словах:

- «վառիւշվիր»՝ варсавир (парикмахер) = варс-волосы + а + вир,
- «ռահվիրայ»՝ рахвира (прокладывающий путь, пионер) = раh-дорога + вира,

И, по моему, тот же корень и в топониме «Արմավիւր/վիր»՝ Армавир = Арм(енак) + а + вир).

И корни «Արհմիւ» (Ариман) и «վիր» (vir) создают слово «առհաժիրք», первоначальное значение которого пустое и безосновательное опасение, страх – созданные и распространенные воплощением зла - Ариманом.

RESUME

The Armenian word «առհաժիրք» (arhavirk՝ horror, calamity) is still inaccurate. This article is a new attempt at etymology, which interprets the word as a combination of two roots, one of which is the name of the embodiment of evil in the Zoroastrian religion - Ahriman, as suggested by Hunkerpentyan, but Acharyan does not agree with him or is not sure. And the other is the root “վիր”(vir), which means to create, amend, establish and in reality is synonymous of roots: «շատ» (shat) - Yervandashat, «կերտ» (kert) - Tigranakert, «պատ» (pat) - Vagharshapat, «շէն» (shen) - Haykashen.

The root վիր (vir) is also found in the words:

- «վառիւշվիր»՝ varsavir (hairstylist) = vars (hair) + a + vir,
- «ռահվիրայ»՝ rahvira (paving the way, pioneer) = rah (road) + vira,

And in my opinion the same root is in the toponym

- «Արմավիւր/վիր»՝ Armavir = Arm(enak) + a + vir.

And the roots Արհմիւ (Ahriman) and վիր create the word առհաժիրք, which originally means empty and unreasonable fear, created and spread by the embodiment of evil - Ahriman.